ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«08» հոկտեմբերի 2021 թվականի N:296-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի N: 54-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 3-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 24-ի N: 3196-Լ հրամանի 1-ին և 8-րդ կետերի դրույթները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2021 թվականի մարտի 9-ի ««Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը, հաստիքացուցակը հաստատելու և տնօրենի վարձատրության չափը սահմանելու մասին» N:54-Ա որոշման (այսուհետ՝ Որոշման) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի,

2) Որոշման 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1-ին կետը հետևյալ խմբագրությամբ՝

«2.1. Ընկերության տնօրենի լրացուցիչ աշխատավարձ սահմանել՝ 195000 (մեկ հարյուր իննսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:»:

2. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2021 թվականի օգոստոսի 24-ից ծագած հարաբերությունների վրա:

Հ. ԶՈՀՐԱԲՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է